ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„23" հունվարի 2020թվականի N2 -Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որոշում եմ.

1.Տալ ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ Լևոն Վանիկի Երանոսյանին , սեփականության իրավունքով իրեն պատկանող Շիրակամուտ համայնքի 8-րդ փողոցի թիվ 3 հասցեի տնամերձ հողամասում :
2.Հանձնարարել Շիրակամուտի համայնքապետարանի առաջատար մասնագետ Հ.Իգիթխանյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:
3. Պարտավորեցնել Լևոն Վանիկի Երանոսյանին շինարարական աշխատանքներն սկսել միայն անհրաժեշտ նախագծի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,24'' հունվարի 2020 թվականի N3 - Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԱՆՈՒՇ ԻԳԻԹԽԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ և ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ և ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,համաձայն ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19- թիվ 843-Ն և Շիրակամուտ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41-Ն որոշումների և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորանուշ Իգիթխանյանի 2020թվականի հունվարի 23-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Նորանուշ Իգիթխանյանին /ՀՎՀՀ 66954518 / տալ ,, գ.Շիրակամուտ փողոց Հայկական , թիվ 3/1'' հասցեում գտնվող 12,8 քմ մակերեսով խանութում /հիմնական շինություն/, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի 1-ին եռամսյակի համար:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան